ՀԱՂՈՐԴԱԳՐՈՒԹՅՈՒՆ

Վեհափառ Հայրապետի հրավերով հուլիսի 7—12-ը Մայր Աթոռիս հյուր եղան արաբական երկրներից բարձրաստիճան կրոնապետներ ու հասարակական գործիչներ, որոնք մասնակցել էին հուլիսի 1—4-ը Զագորսկում կայացած ՍՍՀՄ քրիստոնեական եկեղեցիների և մահմեդական, հրեական ու բուդդայական կրոնական կազմակերպությունների համագումարին, որպես հյուրեր:

Մայր Աթոռիս հյուրերն էին.

Ալժիրից՝ կրոնից նախարար և պատվիրակության ղեկավար, Նորին Գերազանցություն Լարբի Սաադունին, մուսուլմանների գերագույն հոգևոր պետ Շեյխ Օթելլին, կրոնից նախարարության բարձրաստիճան պաշտոնյաներ՝ տիարք Բու Աբդելել Մահդին և Աբդուլ Մեջիդը:

Անտիոքից՝ օրթոդոքս եկեղեցու պատվիրակությունը, հանձինս Տիրի և Սիդոնի միտրոպոլիտ, Նորին Գերաշնորհություն Պավել Խուրիի, Հալեպի և Մոնտիարաբի (Սիրիա) միտրոպոլիտ, Նորին Գերաշնորհություն Բասիլիոս Սամախայի և հոգեշնորհ Ռոմանոս վարդապետ Ժահարի (Տրիպոլի):

Լիբանանից՝ իսլամ գերագույն օրենսդիր խորհրդի անդամ և պատվիրակության ղեկավար, մեծահարգ տիար Մուսթաֆա Մանսուրը, իսլամ գերագույն օրենսդիր խորհրդի անդամ տիար Ուաֆիկ Էլ-Կասսարը և արաբական «Ալ-Շաաբ» թերթի գլխավոր խմբագիր տիար Ամին Դուղանը:

Սիրիայից՝ իսլամ գերագույն կրոնապետ Շեյխ Ահմեդ Քաֆթարուն իր շքախմբով:

Հյուրերին ուղեկցում էին Միջին Ասիայի մահմեդականների կրոնական գերագույն վարչության անդամներ պրն. պրն. Ամին Ահմեդշինը, Յուսուֆ Շաքիրովը և Ուսմանջան Ռահիմջանովը:

Բարձրաստիճան հյուրերը այցելեցին ս. Էջմիածնի Մայր տաճարը, ս. Հռիփսիմեի, ս. Գայանեի վանքերը, Զվարթնոցի ավերակները, Գառնի, Գեղարդ, Սևան, ս. Մեսրոպ Մաշտոցի անվան Մատենադարանը, Հայաստանի ժողովրդական տնտեսության ցուցահանդեսը, դիտեցին Մեծ եղեռնի

հուշարձանը և ներկա եղան Վեհարանի դահլիճում իրենց պատվին կազմակերպված հայկական հոգևոր և ժողովրդական երաժշտության համերգին:

Նորին Սրբությունը հուլիսի 9-ին, ի պատիվ հյուրերի, տվեց պաշտոնական ճաշկերույթ, որին ներկա եղան նաև հայ եկեղեցու գործերի խորհրդի նախագահ մեծահարգ տիար Կ. Դալլաքյանը, Գերագույն հոգևոր խորհրդի անդամները և Էջմիածնի միաբանները:

Հինգշաբթի, հուլիսի 10-ի առավոտյան, բարձրաստիճան հյուրերը, Նորին Սրբություն Վազգեն Ա Հայրապետի գլխավորությամբ, բարեկամական այցելություն տվեցին Հայկական ՍՍՀ Գերագույն սովետի նախագահության նախագահի տեղակալ, Նորին Գերազանցություն Հովհաննես Բաղդասարյանին: Փոխ-նախագահը ջերմորեն ողջունեց հյուրերին և հաջողություն մաղթեց կրոնական կազմակերպություններին, աշխարհի խաղաղության և ժողովուրդների բարեկամության համար նրանց տարած շնորհակալ աշխատանքին: Շնորհակալության ջերմ խոսքերով հանդես եկան Նորին Գերաշնորհություն միտրոպոլիտ Պավել Խուրին և Ալժիրի կրոնից մինիստր պրն. Լարբի Սաադունին:

Հրաժեշտ առնելով Վեհափառ Հայրապետից, ուրբաթ, հուլիսի 11-ին, Անտիոքի պատվիրակությունը մեկնեց Օդեսա—Կիև, իսկ շաբաթ, հուլիսի 12-ի երեկոյան, մյուս պատվիրակությունները մեկնեցին Տաշքենդ:

ԴԻՎԱՆ ՄԱՅՐ ԱԹՈՌԻ

16 հուլիս 1969 թ.,
Ս. Էջմիածին